ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՇԱԽՄԱՏԱՅԻՆ ՖԵԴԵՐԱՑԻԱ

ARMENIAN
CHESS FEDERATION

0025, Հայաստան, Երևան, Խանջյան 50,
Հեռ./ֆաքս՝ (374)10-570758
էլ. փոստ՝ info@chessfed.am

50, Khandjian Str., 0025, Yerevan, Armenia
Tel./Fax: (374)10-570758
E-mail: info@chessfed.am

Որոշում № 6
Հայաստանի շախմատային ֆեդերացիայի

ք. Երևան, 11 նոյեմբերի 2016 թ.

Հայաստանի շախմատային ֆեդերացիան որոշում է.

ա. Ի հավելումն Հայաստանի շախմատային ֆեդերացիայի 2015 թ. մարտի 24-ի որոշման «ա» կետի պահանջների՝ առաջին կարգի որակավորում տալ նրանց, ովքեր առաջին կարգի որակավորման մրցաշարերում 9 հնարավորից կվաստակեն 8 միավոր:

բ. Թույլատրել յուրաքանչյուր մարզում տարին մեկ անգամ անցկացնել առաջին կարգի որակավորման մրցաշար, որը պետք է անցկացվի Հայաստանի շախմատային ֆեդերացիայի հսկողության ներքո: Մրցաշարի արդյունքները ներկայացնել որակավորման հանձնաժողով՝ մրցաշարի ավարտից հետո 15-օրյա ժամկետում:

գ. Առաջին կարգի մրցաշարերի համար սահմանել ժամակարգ՝ 90 րոպե յուրաքանչյուր կողմին՝ մինչև պարտիայի ավարտը:

դ. Հայտարարել նկատողություն մրցաշարի մասնակցին և իր մարզչին, եթե մասնակիցը առանց հիմնավորման (նման հիմք կարող է հանդիսանալ օրինակ անառողջ լինելու մասին տեղեկանքը) դուրս կգա որևէ որակավորման մրցաշարից:

ե. Արգելել որևէ որակավորման մրցաշարի հետագա ընթացքից հանել այն մասնակիցներին, ովքեր մրցաշարի ընթացքում հավաքում են որակավորման համար անհրաժեշտ միավորները (օրինակ, եթե 4-րդ կարգի որակավորման մրցաշարի մասնակիցը 7 հնարավորից վաստակում է 6.5 միավոր, ապա անկախ այս արդյունքից, նա պարտադիր շարունակում է մասնակցել մրցաշարին):

զ. Չորրորդ կարգ լրացնելու համար անհրաժեշտ է 8 հնարավորից վաստակել 6.5 միավոր՝ նախկին 7 միավորի փոխարեն կամ երկու անգամ 8 հնարավորից՝ 6 միավոր: Թույլատրել 4-րդ կարգի որակավորման մրցաշարում 6 միավոր վաստակած շախմատիստին մասնակցել 3-րդ կարգի որակավորման մրցաշարի (8 հնարավորից վաստակելով 4.5 միավոր՝ մասնակիցը ստանում է 4-րդ կարգ, 6 միավոր հավաքելու դեպքում՝ 3-րդ կարգ):

Նախագահի առաջին տեղակալ՝ Ս. Լպուտյան